Մասնագիտական պարտականությունները կատարելիս բուժաշխատողները կարող են վարակվել արյան միջոցով փոխանցվող հիվանդությունների հարուցիչներով: Դրանցից առավել վտանգավոր են՝

- վիրուսային հեպատիտ B-ն,
- վիրուսային հեպատիտ C-ն,
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակը:

ՎԱՐԱԿՎԵԼՈՒ ՎՏԱՆԳՆ ԱՌԿԱ Է ՀԵՏԵՎՅԱԼ ԴԵՊՔԵՐՈՒՄ՝

- մաշկի վնասում ասեղի ծակոցից և սրածայր գործիքներից,
- լորձաթաղանթների կամ վնասված մաշկի աղտոտում արյունով կամ այլ կենսահեղուկներով,
- չվնասված մաշկի երկարատև (մի քանի րոպե և ավելի) կամ մեծ մակերեսով շփում արյան կամ այլ կենսահեղուկների հետ,
- տարբեր սուր գործիքների և առարկաների հետ (կոտրատված եզրերով ապակիներ, փորձանոթներ) անզգույշ վարվելիս, ինչպես աշխատանքի ընթացքում, այնպես էլ աշխատանքի ավարտից հետո դրանց օգտահանման (ուտիլիզացիա) ժամանակ,
- վնասված կամ թափածակվող տարողություններ օգտագործելիս:

Վնասվածքներ ստանալու հավանականությունը մեծանում է հատկապես անհետաձգելի օգնություն ցուցաբերելիս:

Մասնագիտական վարակումներից խուսափելու համար անհրաժեշտ է՝

- օգտագործել անհատական պաշտպանիչ միջոցներ՝ ձեռնոց, ակնոց, դիմակ...,
- նախընտրել միջամտությունների կատարման այն տարբերակը, որը հնարավորինս նվազեցնում կամ բացառում է շփումը արյան և այլ կենսաբանական նյութերի հետ,
- բժշկական թափոնների անվտանգ փոխադրում և ըստ հրահանգի ախտահանում:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Արյունով կամ այլ կենսահեղուկներով աղտոտման վտանգ պարունակող միջամտությունները կատարել ձեռնոցներով, որոնք պետք է ճիշտ ձեռքի չափով լինեն:
- Արյան կամ այլ կենսահեղուկների ցայտացրման վտանգի առկայության դեպքում օգտագործել նաև դիմակ, պաշտպանիչ ակնոցներ, խալաթ, անջրանցիկ գոգնոց:
- Անհանգիստ հիվանդներին միջամտություններ կատարել նրանց հանգստացնելուց կամ հուսալիորեն անշարժացնելուց հետո:

Ձեռքերի վնասման դեպքերում ձեռնոցների առկայությունը մաշկին հասնող արյան քանակը նվազեցնում է 50%-ով:

ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՎՈՐ Է՝

- օգտագործված ներարկիչներն առանց ասեղները կափարիչով փակելու, տեղադրել չթափածակվող և բավարար բացվածք ունեցող տարողությունների մեջ,
- օգտագործված սրածայր գործիքների համար նախատեսված տարողությունները տեղադրել հարմար տեղում (ձեռքին հասանելի հեռավորության վրա՝ դեմքից ցածր),

- օգտագործված սրածայր գործիքներով տարողությունները փոխարինել նորերով 2/3-ը լցվելու դեպքում և տեղափոխել միայն հուսալիորեն փակելուց հետո:

- չանցկացնել կափարիչներն օգտագործված ներարկիչների ասեղների վրա.
  դա կարելի է անել միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում՝ կիրառելով «մեկ ձեռքի» մեթոդը (սեղանին դրված կափարիչի մեջ մտցնել ասեղը և նոր միայն ձեռքով սեղմել կափարիչը),



- չփոխանցել սրածայր գործիքները ձեռքից ձեռք,

- չծռել, չկոտրել, ներարկիչների վրայից չհանել օգտագործված ասեղները,
- չօգտագործել կոտրատված եզրերով ապակե տարողություններ՝ արյուն և այլ կենսահեղուկներ վերցնելիս,